# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀՄՆՄԱԾՁԲ-19/75-Հ1

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ N ՀՀՄՆՄԱԾՁԲ-19/75 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» «07» 2020 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՀԱՆԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թ. մայիսի 21-ի N 834-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ելնելով անհրաժեշտությունից Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին 2019 թվականի նոյեմբերի 21-ին կնքված թիվ ՀՀՄՆՄԱԾՁԲ-19/75 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Հաստատել պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նոր Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարման նոր ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3<br>Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011032431<br>ՀՎՀՀ 02698732 | «ԱՀԱՆԱ» ՍՊԸ<br>Հասցեն՝ ք Երևան Վ. Վաղարշյան 15, բն 5,<br>հեռ.՝ 010271131, 093598998<br>«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Արաբկիրի մ/ճ<br>Հ/Հ 163058566908,<br>ՀՎՀՀ 00080002 |
| **Գլխավոր քարտուղարի տեղակալ՝** | **Տնօրեն՝** |
| ------------------------ **Վ. Գասպարյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ---------------------------- **Լ. Հարությունյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված թիվ 1*
*« 21 » « 07 » 2020 թ. կնքված*
*N ՀՀՄՆՄԱԾՁԲ-19/75-Հ1 համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը* |
| 1 | 98111140/12 | Գնման առարկա է հանդիսանում՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքի Սանահին վանքային համալիրի կառույցների վերականգնման և ամրակայման (Սբ Ամենափրկիչ եկեղեցու տանիքների նորոգման) աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերումը | դրամ | 234056 | 1 | ՀՀ Լոռու մարզ, Ալավերդու համայնք, Սանահին վանքային համալիր | Ծառայությունն իրականացնել Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ վերականգնողական և դրան առնչվող շինարարական աշխատանքներին զուգահեռ մինչև շինարարության ավարտը |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ փարվա դեկտեմբերի 1-ը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

_________________ Վ. Գասպարյան _________________ Լ. Հարությունյան
(ստորագրություն) (ստորագրություն)
Կ.Տ Կ.Տ

Հավելված թիվ 2
« 21 » « 07 » 2020 թ. կնքված
N ՀՀՄՆՄԱԾՁԲ-19/75-Հ1 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ պետական բյուջեից՝ այդ թվում ըստ ամիսների | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր մինչև 30-ը | **Ընդամենը** |
| 1 | 98111140/12 | Հեղինակային հսկողության ծառայություններ | 187244 | 187244 | 187244 | 234056 | 234056 | 234056 | **234056** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Լ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ